**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

02.05.2018թ.
ժամը $11^{00}$

Մասնակցում էին՝
**Գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ ՍՎ ՋՏԾ հաշվառման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Կ. Ավետիսյան,
ՀՀ ՊՆ ՌՌ ՀՕԾ բաժնի ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՀԱ, ՋՏ, ԱՏ միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ա. Ղումաշյան:
**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Ա.Ամիրյան:

Բացակայում է ՀՀ ՋՈՒ ՄՊ վարչության պետի տեղակալ, գնդապետ Ս. Բաղդասյանը:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Ա. Ամիրյան)

1. Մասնակիցների՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. Մասնակիցների՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

(Ա. Ամիրյան)

1.1 Ա/Ձ ,,Նաիրի Թորոսյան,,-ը և «Վարբաղ» ՍՊԸ-ն ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, հայտով առաջարկված ապրանքների (ապրանքների) ամբողջական նկարագրերը ներկայացրել են, սակայն դրանցում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Ա/Ձ ,,Նաիրի Թորոսյան,,-ի կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում են <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը, բացի այդ ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ 1-ին չափաբաժնի (Ներկ՝ պաշտպանական, ԽՎ-518 (Ներկ պաշտպանական ԽՎ-518)) մասով նշված ՏՈՒ գոյություն չունի: «Վարբաղ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները առկա են, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը բացակայում են:.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն՝ մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

Հաշվի առնելով վերը նշված անհամապատասխանությունները՝ 02.05.2018թ. գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և մասնակիցներին առաջարկել շտկել անհամապատասխանությունները:

04.05.2018թ. գնահատող հանձնաժողովը շարունակեց Մասնակիցների որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստը: «Վարբադ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող շտկումները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխանող:

Ա/Ձ ,,Նաիրի Թորոսյան,,-ի կողմից պահանջվող շտկումները չեն ներկայացվել: Հաշվի առնելով այդ հանգամանքը, գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել Ա/Ձ ,,Նաիրի Թորոսյան,,-ի հայտը:

Ա/Ձ ,,Նաիրի Թորոսյան,,-ի հայտը՝ մերժելու արդյունքում, ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Վարբադ» ՍՊԸ-ն:

1.2 Հանձնաժողովը որոշեց առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում չներկայացնել, քանի որ «Վարբադ» ՍՊԸ-ն այլ չափաբաժնով ճանաչվել էր 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և համաձայն եզրակացության, մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

1.3 Որակավորման հայտերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 05.05.2018թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Վարբադ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից՝ 3-րդ չափաբաժնի մասով և անգործության ժամկետի ավարտից հետո մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել ոչ ուշ քան, «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Տ. Մաթևոսյան

Գնահատողներ՝ Կ. Ավետիսյան

Կ. Բրուտյան

Ա. Ղումաշյան

Գնումները համակարգող՝ Ա. Ամիրյան